ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«11» 04 2013 թ.

№ Կ-549

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2013 թվականի մարտի 5-ի 02/12.9/2848-13 գրության՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների դիվանագետների ընտանիքի անդամների վարձատրվող աշխատանքի թույտվության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ. Բաղդասարյան

010-8991
11 04 2013

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների դիվանագետների ընտանիքի անդամների վարձատրվող աշխատանքի թույտվության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների դիվանագետների ընտանիքի անդամների վարձատրվող աշխատանքի թույտվության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ նկատառումները.

1. Համաձայնագրի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում «չամուսնացած զուգընկեր» բառերն հստակեցման կարիք ունեն, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նման հասկացություն սամանված չէ:

2. Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ վարձատրվող աշխատանք իրականացնող անձինք ազատվում են բնակության/կացության թույլտվություն ձեռք բերելու պահանջից, երբ ստանում են վարձատրվող աշխատանք Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Իսկ *Հայաստանի Հանրապետությունում համապատասխան բնակության/կացության թույլտվությունները տրամադրվում են ըստ անհրաժեշտության:* Առաջարկում ենք հստակեցնել, թե որ դեպքերն են համարվելու անհրաժեշտ:

3. Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ *բացառիկ դեպքերում*, ընտանիքի անդամները կարող են շարունակել իրենց եկամտաբեր գործունեությունն անհրաժեշտ, բայց սահմանափակ ժամանակահատվածում՝ առանց բնակության/կացության թույլտվության և (կամ) աշխատանքի թույլտվության՝ դիվանագիտական առաքելության անդամի կամ հյուպատոսական հիմնարկի կադրային պաշտոնատար անձի նշանակման ժամկետը ավարտելուց հետո: Առաջարկում ենք հստակեցնել «բացառիկ դեպքեր» հասկացությունը և այն մարմինները, որոնք որոշում են կայացնում տվյալ պարագայում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ **Ա. ԹՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Ա. Ղարիբջանյան